

**ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ 60-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝
5-ՐԴ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻՑ (2019, ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-30)**

**Proceedings of the 5th International Conference of Young
Researchers Dedicated to the 60th Anniversary of Matenadaran
(November 28-30, 2019)**

**Из материалов 5-ой международной конференции молодых
ученых, посвященной 60-летию Матенадарана (28-30 ноября, 2019)**

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մաշտոցի անվան Մատենադարան

**ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒՄ «ԲԱՐՁՐԱՑՈՒՑԷՔ»-Ի
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԼՁՏԻՆԵՐԵՆ
ԹՎՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր՝ *Ներսես Շնորհալի, Դավիթ Փիլիսոփա, Խաչ, մեկնություն, պատ-
ճառ, քրիստոսաբանություն, նեստորականություն, ձեռագիր,
Ջուզեպպե Կապպելլետտի:*

*Հայ միջնադարյան մեկնողական գրականության հետաքրքրական ստեղ-
ծագործություններից է Ներսես Շնորհալու (1102-1173) Դավիթ փիլիսոփայի
(V-VI դդ.) «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» երկի մեկնությունը¹:
Ներբողն առավելապես հայտնի է «Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր»
սկսվածքի առաջին բառով «Բարձրացուցէք»:*

1207 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ

¹ Մեկնության հայերեն ամբողջական բնագիրը դեռևս անտիպ է, այն պատրաստում ենք հրատարակության: Մսեր Մսերեանը (1808-1873) հրատարակել է «Բարձրացուցէք»-ի Պատճառը և մի փոքր հատված Շնորհալու Մեկնությունից (տե՛ս Սրբոյ Հօրն մերոյ **ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐԻՏԱԼՈՅ** Մեկնութիւն «Բարձրացուցէք» ճառի Դավթի Անյաղթ փիլիսոփայի Ի Սուրբ Խաչն, պատրաստեց Մ. Մսերեանց, Ճոսքաղ, հ. 3, Մոսկուայ, 1861-1862, էջ 37-39): Ավելի ուշ նույն Պատճառը հրատարակվել է Վարդան Արեւելցու անվամբ (**Վարդան Արեւելցի, Ճոսք, Ներբողեանք**, աշխատ. Հ. Քեսոսյանի, Երևան, 2000, էջ 285-287):

Մեկնությունը գրվել է XII դարի մատենագիր Վարդան Հաղբատեցու խնդրանքով. «...զոր արարեալ է երիցս երջանիկ սուրբ կաթողիկոսն Հա[յ]ոց Ներսէս՝ ի խնդրո[յ] Վարդանա[յ] վարդապետի, որ ի Հաղբատ կա[յ] եղեալ ի դամբանի»²: Ձեռագրերում այս երկը հանդիպում է տարբեր խորագրերով՝ «Պատճառ Բարձրացուցեացն եւ մեկնութիւն»³, «Տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի Մեկնութիւն բանիցն Դաւթի փիլիսոփայի»⁴, «Պատճառ Բարձրացուցէին մեկնութեան, զոր արարեալ տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի»⁵: Բուն մեկնությանը նախորդում է «Բարձրացուցէք»-ի Պատճառը⁶ (սկ. «Սկիզբն բարեպաշտութեան հաւատոց Հայաստանեաց ունիմք իմանալ զլուսաւորիչն Գրիգորիոս, զի ի նմանէ յառաջացան կրանք եկեղեցոյ եւ ուսումն գիտութեան...»), որը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում երկի ստեղծման հանգամանքների և դրա հեղինակ Դավիթ փիլիսոփայի գործունեության վերաբերյալ: Միանգամայն ընդունելի է ն. Ակինյանի այն կարծիքը, որ Պատճառը հեղինակել է Վարդան Հաղբատեցին և զետեղել Շնորհալու Մեկնության սկզբում⁷: Ամենայն հավանականությամբ, այս հանգամանքով է պայմանավորված ձեռագրերում նշյալ Պատճառի՝ ինչպես Ներսես Շնորհալու, այնպես էլ Վարդան Վարդապետի անունով տարածված լինելը⁸:

Բուն մեկնությունն սկսվում է «Դաւթի փիլիսոփայի Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» խորագրի վերլուծությամբ: Ըստ մեկնիչի՝ «Նախ զանուն դնէ եւ ապա՝ զպատիւն, զի բազումք էին հոմանուն Դաւիթք՝ զատուցանէ պատուովն «փիլիսոփա» կոչելով»: Այս հատվածը շատ կարևոր է՝ որպես մատե-

² Վնտկ. 511, ք. 122ա:

³ Նույն տեղում, ք. 66ա:

⁴ ՄՄ 1409, ք. 289բ:

⁵ ՄՄ 1460, ք. 7ա:

⁶ «Պատճառ»-ը մեկնողական գրականության տեսակ է, որում վերլուծվում և պարզաբանվում է աստվածաբանական կամ փիլիսոփայական երկի ստեղծման ժամանակը, շարժառիթը, հեղինակային պատկանելությունը: Այն յուրօրինակ մտաբերվում է մինչև բուն մեկնությանն անցնելը (Մ. Է. Շիրինյան, «Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում», Աշտանակ, հայագիտական պարբերագիրք, Գ., Երևան, 2000, էջ 36–64):

⁷ Ն. Ակինյան, Դաւիթ Հարբացի Անյաղթ փիլիսոփայ. կեանքն և գործերը, Վիեննա, 1959, էջ 49:

⁸ ՄՄ 1398, ք. 378բ («Տեսութիւն սուղ մտաւոր վասն Բարձրացուցեացն զոր արարեալ է Վարդանայ Վարդապետի»), 3276, 112բ («Մեկնութիւն զոր արարեալ է Վարդան Վարդապետի յաղագս Բարձրացուցեցիցն»): Վարդան Հաղբատեցու, ինչպես նաև՝ Դավիթ Քոբայրեցու և Գրիգոր Աբասյանի Պատճառների մասին մանրամասն տես՝ Մեղրնյան Ա., «Դավիթ Անկաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկի «Պատճառ»-ները, ՊՔՀ № 2, 2013, էջ 202–214:

նագրական վկայություն միջնադարյան Հայաստանում գործած մի քանի Դավիթների գոյություն մասին⁹: Ուշագրավ է նաև այն, որ մեկնվող խորագրում «Բարձրացուցէք»-ի հեղինակ Դավիթը կոչվում է պարզապես «փրկսոփա», այլ ոչ թե Անհաղթ, Ներգինացի կամ Հարքացի: Շնորհալին մեկնաբանում է փրկսոփա բառի նշանակությունը՝ կապելով երաժշտության հետ. «Իսկ անուն փրկսոփայությունեան կատարեալ իմաստից նշանակ է՝ որպէս Պղատոն կամ Պիթագորաս: Եւ ունիմք սովորաբար փրկսոփա ասել, որք յերաժշտական արհեստս կատարեալք են: Այսպէս եւ Դավիթ ոչ միայն փրկսոփա, այլև յաստուածեղէն և յարտաքին հրահանգս անթերի և լիապատար էր: Նորին աղագաւ կոչի փրկսոփա»¹⁰: Այս մեկնությունից օգտվել է աստվածաբան, փրկսոփա Առաքել Սյունեցին (XV դ.), որն ինչ-որ առումով վիճարկել և լրացրել է Շնորհալու բնորոշումը Դավիթ փրկսոփայի վերաբերյալ. «Զի՞նչ է փրկսոփայն, այսինքն փրկսոփայն իմաստասէր լսի. որ գիտէ զբնաբանականն, և զուսումնականն իւր մասամբքն, և զաստուածաբանականն: Իսկ երաժշտականն՝ որ գիտէ զձայնաւորքն, փրկսոփայ կոչեն զի մասն է ուսումնականին: Եւ այս ոչ է իսկապէս փրկսոփայ, այլ միայն անուամբ որպէս համանուն»¹¹:

Միջնադարյան աղբյուրների վկայությամբ՝ Դավիթ Փրկսոփան «Բարձրացուցէք»-ը գրել է Գյուտ Ա. Արահեզացի կաթողիկոսի խնդրանքով՝ ընդդեմ Հայաստան ներթափանցած նեստորականների: Առհասարակ, «Բարձրացուցէք»-ը հաշին նվիրված ստեղծագործություն լինելով, ընդգրկում է աստվածաբանական հարցերի լայն շրջանակ՝ քրիստոսաբանություն, փրկագործություն, մարեմաբանություն, եկեղեցաբանություն, վախճանաբանություն և այլն: Խաչի աստվածաբանությունն անխզելիորեն կապված է քրիստոսաբանության հետ: «Բարձրացուցէք»-ում կիրառվող «աստուածախաչ» բառն ինքնին դավանաբանական, քրիստոսաբանական նշանակություն ունեցող եզր է, ինչպես և «աստուածածին»-ը: Քրիստոսաբանությունը և մարեմաբանությունն ուղղակիորեն առնչվում են փրկագործության վարդապետության հետ, որն սկսվում է ս. Կույսի միջոցով Բանի մարդեղությունից, իսկ խաչով լրման է հասնում Քրիստոսի

⁹ Դասակարգելով Դավիթ Անհաղթ փրկսոփայի անվամբ հայտնի աստվածաբանական և փրկսոփայական երկերը՝ ուսումնասիրողները իրավամբ զանազանում են միջնադարյան Հայաստանում ապրած մի քանի Դավիթների. տե՛ս Վ. Զալոյան, «Դավիթ Անհաղթ (բանասիրական ակնարկ)», ՊԲՀ № 1, 1980, էջ 52-62, J.-P. Mahé, «David l'Invincible dans la tradition arménienne», I. Hadot (ed.), *Simplicius, Commentaire sur les Catégories*, Leiden, New York, København, Köln, 1990, pp. 189-207, B. Contin, *David l'Arménien et l'école d'Alexandrie*, Roma, 2017, pp. 41-45:

¹⁰ ՄՄ 1409, ք. 291ա:

¹¹ Առափել Սիւնեցի, *Լուծմունք Սահմանացն Դավիթի*, Մաղրաս, 1797, էջ 172:

տնօրինական գործունեությունը: Աստու կատարելապես մարդացման և խաչելության վերաբերյալ իր համոզումը Դավիթն ամփոփում է հետևյալ խոսքով. «Եւ որպէս ճշմարտիւ և ոչ կեղակարծելի Աստուած անպարագրելի և անբաւ, և յարգանդի Կուսին բառնիլ կրիւր ըստ մարմնոյ, և մարդկապէս առ ծնունդս մերձեցելոյ. ըստ որում աստուածածին ծնօղն, և նոյն ինքն ծնեալն Աստուած անպարագրելի և անբաւ.... Ըստ որում և խաչս Աստուծոյ խաչ, և նոյն ինքն խաչեալն Աստուած անմահ, անպարագրելի և անբաւ»¹²: Դավիթ նման կարևորելով «աստուածածին» եզրը՝ Ներսես Շնորհալին գրում է. «Յամօթ լիցի նեստորիոս եւ նմանք նոցին, որք միանգամ մարդածին ասացին զՄարիամ եւ ոչ աստուածածին»: Ուստի, ինչպէս «Բարձրացուցէք»-ում, այնպէս էլ Մեկնության մեջ առանցքային տեղ ունի Աստվածորդու կատարելապես մարդեղության խորհուրդն ու նպատակը: Շնորհալին շեշտում է Եկեղեցու հայրերի այն ուսուցումը, որ Հորից անմարմնապէս և անժամանակաբար ծնվածը անարատ Կուչսից ծնվեց: Անպարագիծ Աստված բովանդակվեց մարմնի մեջ, սակայն մնաց անշփոթելի աստվածություն և անփոփոխելի զորությունը: Նա զուգահեռներ է անցկացնում հաչի և Մարիամի միջև, որոնք երկուսն էլ կրեցին անպարագրելի, անտանելի Աստծուն: Շնորհալին նախ համեմատում է ս. Կուչսին անկեզ մորենու հետ, ապա գրում, որ հաչն ավելի բարձր և սքանչելի է. եթէ մորենին կարճ ժամանակով կրեց աստվածային հուրը, իսկ Կուչսը՝ ինը ամիս իր որովայնում, ապա հաչը հավիտյան դարձավ աստվածային հրի սեղան և բնակարան: Կուչսից ծնվելով Աստծու Որդին իր բարձրությունից խոնարհվեց, իսկ հաչի վրա շարշարվելով, ելավ երկինք՝ նստելով Հոր աջ կողմում. «Վասն այսորիկ բարձրագոյն ես, քան զմորենին եւ զԿուչսն, զի թէպէտ եւ բնակեցաւ առ Կոչսն կատարեալ աստուածութեամբ, սակայն առ քոյդ է ահաւոր եւ զարմանալի»¹³: Մեկնելով «Բարձրացուցէք»-ի այն հատվածը, որ ս. Կուչսը կամավորապես երկրպագեց հաչին, Շնորհալին ներկայացնում է մի ավանդություն, համաձայն որի Քրիստոսի Հարությունից հետո ս. Կուչսը Գողգոթայում Տիրոջ խաչի առջև աղոթում էր աշխարհի փրկության համար: Այս դրվագը որոշ առումով աղերսներ ունի «Աստուածածնի տեսիլի» հետ, որի համաձայն, Աստվածամայրը, տեսնելով դժոխքում մարդկանց սարսափելի տառապանքները, արտասվում է և նրանց փրկության համար աղոթում իր Որդուն¹⁴:

¹² Դաւթի Անյաղթ փրկիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վեներաբիկ, 1932, էջ 14:

¹³ Վնտկ. 511, ք. 105բ:

¹⁴ Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, հ. Բ., Անկանոն գիրք նոր կապալաւանաց, Վեներաբիկ, 1898, էջ 383-401:

«Բարձրացուցէք»-ում Դավիթ փիլիսոփայի հայը համեմատում է կենաց ծառի, Նոյյան տապանի, Հակոբի՝ երազում տեսած սանդուղքի, սաբեկա ծառի, տասնաբանյա պատվիրանները պարունակող տախտակների հետ և այլն: Սուրբ Գրքի և եկեղեցու հայրերի ստեղծագործությունների ուղղակի կամ առավելապես անուղղակի վկայակոչմամբ Ներսես Շնորհալին զուգադրում է հին և նորկտակարանյան իրողությունները՝ մատնանշելով աստվածային փրկագործությունների հանգրվանները: Բացի այդ՝ մեկնիչն ուշագրավ օրինակներ է ներկայացնում իր ժամանակի մշակութային, առօրյա կյանքից: Այն առումով Մեկնությունը կարող է օգտակար լինել նաև ժամանակաշրջանի ուսումնասիրման համար: Օրինակ՝ դիտարկելով Հին Կտակարանի դեպքերը որպես Նորի նախատիպ՝ Շնորհալին նկարագրում է, թե ինչպես էին պատկերում թագավորներին. «Ձոր աւրինակ պատկեր թագաւորական յառաջ կապարեալ] նկարագրի եւ ապա բազմերանգ դեղոցն ի վերալ] արկանելով ցուցանէ զճշմարտութիւնն: Նոյնպէս եւ առաջինքն ամենայն ստուերագիր նկարագրութիւն էր մինչ ի գալ ճշմարտութեանն»¹⁵: Մեկ այլ խաչը որպես «իմանալի հնձան» արտահայտությունը մեկնելիս, Շնորհալին խոսում է գինու մասին. «Քանզի աւրէնք են մշակաց արկանել զողկոյզս խաղողոց ի հնձանս եւ կոխել՝ զգինին ուրախարար եւ զանապակն մատուակելով: Վասն որոյ ողկոյզն անմահութեան, մշակեալ ի Հաւրէ, ճմլեցաւ իբրեւ ի հնձանի ի վերայ քո (իմա՝ հաչի)՝ եւ բաւականապէս յուրախութիւն հր՝ շտակաց եւ մարդկան: Որով արբեալ զանապակն երանելի առաքելոցն՝ զմայլեցան ի Հոգին Սուրբ եւ եղեն մատուակք ամենայն տիեզերաց»¹⁶: Իհարկե, քրիստոնեական մատենագրության մեջ Քրիստոս-խաղողի որթատունկ-գինի խորհրդաբանությունը տարածված է, սակայն Շնորհալին շատ պատկերավոր է ներկայացնում՝ շեշտելով անապակ գինու ուրախարար ըմպելիք լինելը:

Հետևելով քրիստոնեական ավանդությանը, Շնորհալին հոգևոր կյանքի վերջնանպատակը համարում է քրիստոնյայի աստվածացումը¹⁷: Աստվածացման եռամասնյա ճանապարհը, որն ընկած է Դավիթի «Բարձրացուցէք»-ի հիմքում¹⁸, արտացոլված է նաև Շնորհալու մեկնության մեջ: Այն դրվագում, երբ Դավիթը նկարագրում է, թե ինչպես մաքրություն և լուսավորության ճանապարհն անցած քրիստոնյան կկարողանա ընկալել անճառելին, Շնորհալին

¹⁵ ՄՄ 1409, ք. 311բ:

¹⁶ Նոյն տեղում, ք. 321աբ:

¹⁷ Մեսրոպ վրդ. Պարսամյան, *Կինել Աստված. Մարդու աստվածացման եռաստիճան ճանապարհն ըստ Ս. Ներսես Շնորհալու վարդապետության*, Էջմիածին, 2015: Նշենք, որ «Բարձրացուցէք»-ի մեկնությունը սույն ուսումնասիրության մեջ ընդգծված չէ:

¹⁸ Ա. Մեխոնյան, «Հաւատոյ մանկունք-ը և Կատարեալ փիլիսոփա-ն ըստ Դավիթ Անհաղթի», *Վէմ համահայկական հանդես*, 2013, № 3 (43), էջ 69-77:

գրում է. «...յորում ի ծայրագոյն գիտութիւնն հասանեմք, եւ մերկանամք յաստեաց ախտակրութենէ՝ մտանելով առ Աստուած»¹⁹: Եվ երբ բանական էակաները հավատան Որդու աստվածությունը, «յայնժամ խոստովանեացի յամենեցունց Աստուած, եւ յամենայնի տէրութիւն նորա թագաւորեացէ հնազանդելոցն, եւ բառնին գայթակղութիւնքն եւ թագաւորէ ճշմարտութիւնն: Յայնժամ եղիցի Աստուածորդի ի մէջ աստուածացելոց եւ յամենայնի խոստովանեացի Տէր եւ Արարիչ»²⁰:

Հավելենք, որ մեկնությունից բացի Ներսես Շնորհալին տաղաշափել է «Բարձրացուցէք»-ը²¹:

XIX դարում իտալացի թարգմանիչ, հայագետ, պատմագետ Զուզեպպե Կապպելլետտին (1802-1876) «Բարձրացուցէք»-ի մեկնությունը թարգմանել է լատիներեն՝ ներառելով Ներսես Շնորհալու երկերի երկհատոր հրատարակություն մեջ²²: Թարգմանությունը կատարվել է Վենետիկի Մխիթարյան միաբանությունից ձեռագրատանը պահվող 1207 թ. ընդօրինակությունից, որն այս երկը բովանդակող մեզ հասած հնագույն օրինակն է²³: Լատիներեն թարգմանությունը շատ նուրբ և մանրակրկիտ աշխատանք է: Զ. Կապպելլետտին փորձել է պահպանել ստեղծագործության ուղիքը, կառուցվածքը, ընդգծել իմաստային նրբությունները: Այդուհանդերձ, թարգմանություն մեջ առկա են որոշ թերություններ՝ մեծապես պայմանավորված հիմք-գրչագրի առանձնահատկություններով: Վենետիկի 1207 թ. ձեռագրում Դավթի «Բարձրացուցէք»-ից մեջբերված ու մեկնվող արտահայտությունները և բառերը հաճախ համառոտված են, անգամ կարող է գրված լինել միայն բառի առաջին տառը: Ի դեպ, այս հանգամանքը եւս փաստում է «Բարձրացուցէք»-ի տարածված և հայտնի լինելու մասին, որովհետև, սովորաբար, ձեռագրերում կրճատվում են սուրբգրային մեջբերումները, որոնց միջնադարյան հեղինակները և գրիչները քաջածանոթ են եղել²⁴: Զ. Կապպելլետտին, երբեմն առանց հատուկ նշման, լրացրել է համառոտված տեղիները՝

¹⁹ Վնտկ. 511, ք. 120բ:

²⁰ Նույն տեղում:

²¹ **Ներսէս Շնորհալի**. Ներբողեան կենսատու սուրբ խաչին (ՄՀ ԻԱ. հ., ԺԲ դար), Երևան, 2018, էջ 537-558:

²² Sancti **Nersētis Clajensis Armeniorum Catholici opera nunc primum ex Armenio in Latinum conversa notisque illustrata**, studio et labore **D. Josephi Cappelletti** (այսուհետև՝ Sancti **Nersētis Clajensis**), Venetiis, typis PP. Mekhitaristarum, in insula S. Lazari, vol. II, 1833, pp. 241-323:

²³ Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Լևոն Արֆեպիսկոպոս Զեֆյանին և Վենետիկի Մխիթարյան միաբանությանը սույն ձեռագրի թվայնացված տարբերակը տրամադրելու համար:

²⁴ Նշենք, որ Հովհաննես Սարկավազի (XI-XII դդ.) կազմած ուսումնական հաստատություններում հանձնարարելի գրականության ծագրային ցանկում, Ներբողն ընդգրկված է Նոր Կտակարանի գրքերի շարքում (տես **Մխիթարայ Այրիվանեցայ Պատմութիւն ժամանակագրական**, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 33-34):

այլապես ձեռագրում խիստ կրճատված լինելու պատճառով նախադասությունն ուղղակի անհասկանալի կլիներ: Ինչպես օրինակ հետևյալ դրվագում (աստղանիշով անկյունավոր փակագծերում մեր լրացումներն են).

«Եւ քում ամենա[*յն] որ [*անձին] անփ[*ոյթ] ար[*արեալ] զփրկու[*թե-նէ] աւգ[*նականութեան] կարաւտ[*ասցի]»²⁵: Զանարժանիցն եւ զշաղախեալն հեղգութեամբ կենացս զեկուցանէ»:

*Et omnis, qui propriam salutem neglexit, tui (O Crux) indigebit auxilii. Indignos vitaeque negligentia inquinatos denotat*²⁶.

Դատելով այն հանգամանքից, որ լատիներենում առկա է նախադասության ամբողջական թարգմանությունը, պարզ է դառնում, որ Զ. Կապպելլետտին այն լրացրել է հայերեն մեկ այլ բնագրի հիման վրա: Վենետիկի ձեռագրատանը կա Շնորհալու մեկնությունը պարունակող մեկ այլ՝ 1802 թ. ձեռագիր, որն ընդօրինակել է Մխիթարյան միաբաններից մեկը՝ անձնական գործածության համար²⁷: Դատելով նկարագրությունից, այս ձեռագրի գաղափար օրինակը հանդիսացել է նշյալ՝ 1207 թ. գրչագիրը, և ամենայն հավանականությամբ, նույն բնագրային առանձնահատկություններն ու աղճատումներն առկա են նաև 1802 թ. ընդօրինակության մեջ: Մեր կարծիքով այսօրինակ թերի տեղիները լրացնելու համար Կապպելլետտին գործածել է ոչ թե Շնորհալու մեկնության մեկ այլ գրչագիր, այլ հենց մեկնվող երկը, այսինքն՝ Դավթի «Բարձրացուցէք»-ը: Այդուհանդերձ, գործածելով «Բարձրացուցէք»-ի բնագիրը, կարծում ենք, որ Կապպելլետտին ամբողջական համեմատություն չի կատարել, այլ լրացրել է միայն անհասկանալիորեն կրճատված բառերն ու արտահայտությունները: Իսկ այն դրվագներում, որտեղ առկա նախադասությունը, թեկուզև կիսատ լինելով, իմաստային առումով հստակ է, նա որևէ լրացում չի արել և հենց այդպես էլ թարգմանել է, ինչպես հետևյալ հատվածում. «Աստուած անպարագրելի եւ անբաւ [*եւ յարգանդի Կուսին բառնիլ կրիւր ըստ մարմնոյ]: Թէպէտ եւ բովանդակեցաւ ի մարմնի անպարագիծն Աստուած, սակայն անշփոթելի աստուածութեամբն եւ անփոփոխելի զարութեամբ կատարէր զըստ մարմնոյն»²⁸:

«*Deus incircumscribitus et infinitus [...]*». *Etsi in corpore comprehensus sit incircumscribitus Deus: verumtamen per inconfusam Divinitatem immutabilemque virtutem perficiebat ea, quae carnis sunt*²⁹.

Ինչպես տեսնում ենք՝ լատիներենում «եւ յարգանդի Կուսին բառնիլ կրիւր ըստ մարմնոյ» արտահայտությունը չի լրացվել, հետևաբար չի թարգմանվել,

²⁵ Վնսկ. 511, ք. 119ա:

²⁶ Sancti Nersetis Clajensis..., p. 319.

²⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, յօրինէց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 863:

²⁸ Վնսկ. 511, ք. 83ա:

²⁹ Sancti Nersetis Clajensis..., p. 266.

որովհետև «Աստուած անպարագրելի է և անբաւ»-ը հասկանալի է և ինչ-որ առումով ավարտուն:

Որոշ դեպքերում էլ, մասնավորապես «Բարձրացուցէք»-ի «Յրհնեալ էս» բառով սկսվող գոհաբանական դրվագներում Կապպելլետտին լրացրել է մի փոքր հաստուած և գրել «*etc.*»՝ մատնանշելով, որ նախադասությունը շարունակվում է³⁰: Այսինքն, այս դեպքում էլ մեկնությունը կարդալու և լիապես հասկանալու համար պետք է ունենալ մեկնվող երկի, այն է՝ «Բարձրացուցէք»-ի բնագիրը:

Ձ. Կապպելլետտին որոշակի մեկնաբանությամբ է ներկայացրել քրիստոսաբանական եզրերն ու արտահայտությունները՝ շեշտելով, որ Ներսես Շնորհալու առարկությունները երկբնակ քրիստոսաբանության առնչությամբ բացառապես նեստորականության դեմ են և ոչ երբեք քաղկեդոնական դավանանքի: Այսպես՝ Աստծու մարդեղության, խաչելության և փրկագործության վերաբերյալ Դավիթ Փիլիսոփայի «Վասն զի աստուածազար մեր փրկութիւնս է» արտահայտության վերաբերյալ Շնորհալին գրում է. «Ընդդէմ երկաբնակացն է բանս: Խոստովանի արդարեւ Աստուծոյ զաւրութիւն զսա՛ իբրեւ զսուր երկսայրի հակառակորդին ի ձեռին Աստուծոյ: Զի մարդո[յ] մահ անկարելի է փրկութիւն առնել... »³¹: «Ընդդէմ երկաբնակացն է բանս» արտահայտությունը լատիներեն թարգմանվել է *Adversus Nestorianos est hic sermo*³²:

Մեկ այլ հատվածում, որտեղ խոսվում է «Բարձրացուցէք»-ի ստեղծման հանգամանքների մասին. «...եւ այլք՝ թէ յերուսաղէմ՝ առաջի փրկական Խաչին սրբոյ, եւ ոմանք, թէ՛ յետ դարձին ի Պարսից, եւ կէսք՝ ի տեղի ինչ անապատի գրեալ՝ ըստ հակադրութեան երկաբնակացն դիմաբանութեան», վերջին արտահայտությունը թարգմանվել է *Adversus opinionem asserentium duas in Christo personas*³³: Այսօրինակ թարգմանությամբ Կապպելլետտին կրկին ընդգծում է, որ երկը գրվել է ընդդէմ Քրիստոսի մեջ երկու անձ ընդունող նեստորականության:

Հայերեն բնագրում և դրա լատիներեն թարգմանության մեջ կա մի ուշագրավ հատված՝ կապված Քաղկեդոնի ժողովի հիշատակության հետ. «Իսկ երանելին Դավիթ, զոր ծանուցաք զպատճառն, հարկաւորեալ ի սուրբ հայրապետէն յաղագս երկաբնակաց լեզուագարութեանն, որովք չարք ոմանք ի նեստորականաց աղանդոյն, ի Քաղկեդոնի ժողովոյն եկին ի Հայս՝ թիւրելով

³⁰ E.g. *ibidem*..., p. 285, 286, 289, 297.

³¹ Վնտկ. 511, 77ա:

³² *Sancti Nersets Clajensis*..., p. 257.

³³ *Ibidem*, p. 242.

զճշմարտութիւն հաւատոյն...»³⁴: *Porro beatus David, quaemadmodum superius diximus, a S. Patriarcha coactus, ob dividendum deliria, unde nonnulli improbi e Nestorii secta in Armeniam venerunt, fidei veritatem contorquentes...*³⁵: Ինչպես տեսնում ենք, լատիններենում բացակայում է «Ի Քաղկեդոնի ժողովոյն» արտահայտութիւնը: Վենետիկի ձեռագրի հետ համեմատելուց հետո պարզ դարձավ, որ իրականում այն եղծված է³⁶. դժվար է ասել, թե երբ և ինչ պայմաններում³⁷: Լատիններեն թարգմանչի մտադրութիւնը ամեն կերպ ցույց տալու, որ ինչ-որ առումով արդարացված է: Մեր համոզմամբ՝ Շնորհալու մեկնութիւն մեջ քննադատվող երկբնակ քրիստոսաբանութիւնը նեստորականութիւնն է, այլ ոչ թե քաղկեդոնական դավանանքը: Իր հերթին Ջ. Կապպելլետտին յուրովի մեկնաբանել կամ շրջանցել է այն արտահայտութիւնները, որոնք կարող էին հետագա թյուրըմբռնման պատճառ դառնալ: Պատահական չէ, որ բուն մեկնութիւն մեջ Շնորհալին ոչ մի անգամ չի հիշատակում քաղկեդոնականներին, մյուս կողմից համապատասխան տեղիներում հանդիմանում է նեստորին և նեստորականներին³⁸: Ինչ վերաբերում է Քաղկեդոնի ժողովի վերոնշյալ հիշատակութիւնը, ապա այն «Բարձրացուցէք»-ի Պատճառից մի հատված է, որն, ինչպես սկզբում ակնարկեցինք, մեր համոզմամբ հեղինակել է ոչ թե Ներսես Շնորհալին, այլ Վարդան Հաղբատեցին: Առհասարակ, «Բարձրացուցէք»-ի առնչութիւնը Քաղկեդոնի ժողովի և նեստորականների հետ կապված այս դրվագը շատ հետաքրքրական է: Նախ՝ Ներբող-ի Նախադրութիւն մեջ չեն նշվում ո՛չ նեստորականների, ո՛չ էլ Քաղկեդոնի ժողովը, այլ թվարկվում են կոնկրետ անձինք. «որոց անուանին Կոստանդին և Պետրոս և Թէոդորէ»³⁹: Անտիոքից Հայաստան եկած այս քարոզիչները չէին ընդունում Մարիամին որպես

³⁴ ՄՄ 1409, ք. 290բ:

³⁵ Sancti Nersesis Clajensis..., p. 243.

³⁶ Վնտկ. 511, ք. 67բ:

³⁷ Հարկ է նշել, որ Ներսես Շնորհալու Մեկնության Մ. Մսերեանի վերոնշյալ հրատարակության մեջ Քաղկեդոնի ժողովի փոխարեն կետագծեր են դրված (տե՛ս **Ներսիսի Շնորհալու Մեկնութիւն «Բարձրացուցէք» ճառի...**, էջ 39):

³⁸ Դավանաբանական խնդիրների, Ներսես Շնորհալու քրիստոսաբանական հայացքների և եկեղեցիների միությանն ուղղված գործունեության ֆունկցիոնը դուրս է սույն հոդվածի շրջանակներից: Այդ մասին՝ **Ղ. Ալիշան**, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ, 1873, **В. L. Zékiyan**, "St. Nerses Shnorhali en dialogue avec les Grecs: un prophète de l'oecuménisme au XII^e siècle", *Armenian Studies, Etudes Armeniennes in memoriam Haig Berberian*, Lisboa, 1986, էջ 861-883, **Н. Khatchadourian**, "The Christology of St. Nerses Shnorhali in Dialogue with Byzantium", *Miscellanea Francescana*, 78 (1978), էջ 413-434 և այլն: Սույն Մեկնությունը կարող է նպաստել աստվածաբանական տարբեր հարցերի, մասնավորապես քրիստոսաբանության առնչությամբ Ներսես Շնորհալու տեսության ամբողջացմանը և ուսումնասիրմանը:

³⁹ **Դափի Անյաղբ փիլիսոփայի Մատենագրութիւնք**, էջ 6:

աստվածածին, և խաչը որպես Աստծու խաչ. «Ոչ գոլ զՄարիամ աստուածածին, և ոչ զխաչն Աստուծոյ խաչ, այլ գողոց պատժարան»⁴⁰: Վարդան Հաղբատեցու Պատճառի այս հատվածում, ինչպես տեսանք, վերոնշյալ անձանց փոխարեն նշվում են Նեստորը և Քաղկեդոնի ժողովը («ումանք ի ժողովոյն Քաղկեդոնի և յաղանդոյն Նեստորի»): Վերջինիս աշակերտ Դավիթ Քոբայրեցին «Բարձրացուցէք»-ի իր հեղինակած Պատճառում նույն կերպ է արտահայտվում. «զի որ ի ժամանակին յայնմիկ տարածեալ աղանդն նեստորականացն, որք ի ժողովոյն Քաղկեդոնի եկին ի Հայս...»⁴¹: Պարզ է, որ երկու Պատճառներում էլ արտացոլված է Հայ միջնադարյան աստվածաբանության մեջ տարածված այն ընկալումը, որ քաղկեդոնականության հիմքում ընկած է Նեստորի վարդապետությունը, և որ եփեսոսի տիեզերաժողովում (431 թ.) նգովված նեստորականները Քաղկեդոնի ժողովից հետո սկսեցին կրկին հզորանալ: Գրիգոր Աբասյանը (XII-XIII դդ.), որն իր կազմած «Գիրք պատճառաց»-ում որոշ փոփոխություններով ընդգրկել է Դավիթ Քոբայրեցու նշյալ Պատճառը, խմբագրել է Քաղկեդոնի ժողովի հիշատակումը. «էր ի ժամանակին յայնմիկ տարածեալ աղանդն Նեստորի»⁴²: Գրիգոր Աբասյանը ներկայացնում է Նեստորի վարդապետության հիմնական դրույթները. «որք ոչ աստուածածին զՄարիամ ասէին, եւ ոչ զխաչն աստուածընկալ եւ Աստուծոյ խաչ: Քանզի յանդգնէին սոսկ մարդ ասել զբարձրացեալն ի վերայ խաչին եւ զխաչն լոկ ի գաւրոսքենէ Աստուածն բանի դաւաճանջէին: Այսպէս եւ զՄարիամ մարդածին, եւ ոչ աստուածածին համբաւէին»⁴³: Նկատենք, որ Պատճառներում նեստորականների վերաբերյալ «ի ժողովոյն Քաղկեդոնի» ձևակերպումը շատ նման է Պարսից ուղղափառներին՝ Հայոց կաթողիկոսին ուղղված երկրորդ թղթի հետևյալ հատվածին, երբ հայտնում են, թե նեստորականները «զմարտ պատերազմի նորոգելով միսանգամ Նեստորի... ալեկոծեալ սուրբ եկեղեցի, ի ժողովոյն Քաղկեդոնի գաւրացեալ: Սկիզբն առնելով ի Նեստորէ շարիմաց խորհեցալէ...», որին ի պատասխան Բաբկեն Ոթմսեցին գրում է. «եւ փախչիմք ուրացեալ զի Քաղկեդոնին ստուսինն Նեստորի և այլոցն նմանից...»⁴⁴: Կարող ենք ասել, որ նեստորականության դեմ գրված «Բարձրացուցէք»-ը, ինչպես նաև նրա Նախադրությունը հետագայում դիտարկվել են քաղկեդոնականության դեմ պայքարի

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Գ. Աղանեանց, «Հնից-Նորից (հնախօսական ուղեւորութիւն)», Լուսայ, Ա., Տփլիս, 1900, էջ 254:

⁴² Մ. Է. Շիրինյան, «Հայոց գրեթէ գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի», էջմիածին, 2004, հուլիս-օգոստոս (է-Ը), էջ 90:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 157-158:

համատեքստում: Այս առումով հատկանշական է, որ Դավիթ Փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկն առաջին անգամ հրատարակվել է 1688 թ.՝ հակաքաղկեդոնական մի շարք երկերի կողքին⁴⁵: Այդուհանդերձ, աներկբայելի է, որ Ներսես Շնորհալին իր մեկնություն մեջ հստակ տարանջատում է Նեստորի ուսմունքը քաղկեդոնական դավանանքից, ինչն էլ յուրովի մեկնաբանություններ փորձում է ընդգծել Ջ. Կապպելլետտին:

«Բարձրացուցէք»-ի մեկնություն մեջ «սուտի» եւ «ճշմարիտի», «անկատարի» ու «կատարյալի» հակադրությունը մատնանշելու համար Ներսես Շնորհալին օրինակ է բերում հին հունական դիցաբանությունից՝ միաժամանակ արտացոլելով իր իմացությունը և հետաքրքրությունը հին աշխարհի մշակույթի հանդեպ. «Ըստ հեթանոսականացն իբր ի ձեան ցրտացուցանել կամ ի հուր այրել [*եւեթ]: Հեթանոսք առասպելաբանելով իւրեանց աստուածոցն մի զարուծիւն ասէին. զԴեմետր երկրի արարիչ կոչէին, զԿուանոս՝ երկնի, եւ զՀեփեսոս՝ հրո[յ], զՊիսիդոն՝ ծովու, զԴիոնէսիոս՝ որթոյ, եւ որ այլ եւս ինչ են յերկրի, յայլ ոմանց արարեալ»⁴⁶: Այս հատվածում Ջ. Կապպելլետտին հունական դիցաբանության աստվածների անունները համապատասխանաբար փոխարինել է հռոմեական դիցարանի աստվածների անուններով. *Juxta Gentiles: ut in nive frigus, aut in igne aestus. Gentiles fabulose loquentes, singulis Diis suis singulum attribuebant virtutem. Cererem terrae creatricem vocabant, Saturnum caeli conditorem, Vulcanum ignis, Neptunum maris, Bacchum vitis; et quaeque alia sunt in terra, ab aliis quibusdam condita autumabant*⁴⁷.

Այսպիսով, հայերեն ձեռագրերի և լատիներեն թարգմանության հիման վրա փորձեցինք ներկայացնել մի քանի դրվագ Ներսես Շնորհալու «Բարձրացուցէք»-ի մեկնությունից: Հույս ունենք, որ բնագրի առաջիկա լույսընծայումը կարող է օգտակար լինել ինչպես աստվածաբանական-դավանաբանական խնդիրների, այնպես էլ միջնադարագիտության զանազան հարցերի ուսումնասիրման համար:

⁴⁵ Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց, Նոր Զուղայ, 1688, էջ 204-261:

⁴⁶ Վնակ. 511, p. 78ա:

⁴⁷ Sancti Nersesis Clajensis. ..., p. 259.

ARMINE MELKONYAN

COMMENTARY ON THE BARDZRATS‘UTS‘EK‘ (“EXALT”)

BY NERSĒS THE GRACEFUL AND ITS

LATIN TRANSLATION

Keywords: Nersēs the Graceful, David the Philosopher, cross, commentary, cause, Christology, nestorianism, manuscript, Giuseppe Cappelletti.

Nerses Shnorhali (the Graceful) wrote his *Commentary on the Bardzrats‘uts‘ek‘* (*Encomium on the Holy Cross*) by David the Philosopher (5th–6th) at the request of the 12th century author Vardan Haghbatets‘i. The latter wrote the “Cause” on the *Encomium*, which is inserted into the beginning of the *Commentary*. According to medieval Armenian sources, David the Philosopher wrote his *Encomium* by order of the Catholicos Gyut Arahezats‘i (461–478) against Nestorianism which had penetrated into Armenia. Thus, Shnorhali pays special attention to Christological issues.

He draws parallels between the Cross and Mary because both of them carried the uncircumscribable, uncarriable God. Shnorhali juxtaposes the events of the Old and New Testaments, pointing to the different stages of redemption and salvation, and showing the prototypes of the Cross. Shnorhali’s teaching on godlikeness and deification (theosis) is also reflected in the *Commentary*. He gives interesting examples from the history, culture and everyday life of the Middle Ages.

In the 19th century, the Venetian priest and historian Giuseppe Cappelletti translated the *Commentary on Bardzrats‘uts‘ek‘* into Latin including it in the two-volume edition (1833) of Shnorhali’s writings. This valuable translation was made from the manuscript dated 1207, kept in the Mekhitarist Congregation of Venice. However, there are some deficiencies in the translation, mostly due to the contents of the mentioned manuscript: phrases and words quoted from the *Bardzrats‘uts‘ek‘* by David the Philosopher are often abbreviated, even sometimes only the first letters of words are written.

In order to complete such passages, Cappelletti did not use another copy of the *Commentary*, but David’s work itself. Expressions and phrases concerning Christology have been translated with certain interpretation⁴⁸.

⁴⁸ Shnorhali’s *Commentary* is still unpublished and we are currently preparing it for publication.

АРМИНЕ МЕЛКОНЯН

КОММЕНТАРИЙ НЕРСЕСА ШНОРАЛИ К “БАРДЗРАЦУЦЕКУ”
("ПРЕВОЗНОСИТЕ") И ЕГО ЛАТИНСКИЙ ПЕРЕВОД

Ключевые слова: Давид Непобедимый, Нерсес Шнорали, Крест, комментарий, “причина”, христология, несторианство, рукопись, Джузеппе Капелетти.

Нерсес Шнорали создал свой Комментарий к “Панегирику Богоприимному Святому Кресту” (“Бардзрацуцек”) Давида философа (V-VI вв.) по просьбе автора XII века Вардана Ахбатечи. Последний написал “Причину” к Панегирику, которая вставлена в начало Комментария. Армянские средневековые источники свидетельствуют о том, что Давид Анахт написал Панегирик по заказу Католикоса Гюта Араезаци (461-478) против проникшего в Армению несторианства. В своем Комментарии Шнорали уделяет особое внимание христологическим вопросам. Он проводит параллели между Крестом и Марией, так как оба носили безграничного, неместимого Бога. Нерсес Шнорали сопоставляет события Ветхого и Нового Заветов, указывая на различные стадии искупления, спасения и показывая прототипы Креста. Учение Шнорали о богоподобии и обожении также отражено в этом труде. Интересны также приводимые в Комментарии историко-культурные и бытовые детали. В 19-ом веке венецианский священник, историк Джузеппе Капелетти перевел Комментарий к “Бардзрацуцек”-у на латынь, включив перевод в двухтомное издание (1833 г.) трудов Шнорали. Этот ценный перевод был сделан с рукописи 1207 г., хранящейся в конгрегации Мхитаристов в Венеции. Однако в переводе есть некоторые недостатки, в основном как следствие особенностей упомянутой рукописи: фразы и слова, цитируемые из “Бардзрацуцек”-а Давида Философа, часто сокращены, иногда цитата состоит только из первой буквы слова. Чтобы восполнить такие неполные отрывки, Капелетти использовал не какую-нибудь другую копию Комментария, а текст самого Давида. Выражения и фразы, относящиеся к христологии, были переведены им с определенной интерпретацией⁴⁹.

⁴⁹ Текст *Комментария* Шнорали до сих пор не опубликован, и в настоящее время мы готовим его к изданию.